10295

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
« 17 » 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0149-21

Ձեռնարկողը՝ ***«Դեմեր» ՍՊԸ***
Կոտայքի մարզ, գ. Արամուս Տիգրանաձորի 122

Գործունեությունը՝ ***Արամուսի բազալտների հանքավայրի «Դեմեր-1» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0149-21

< 17 > 08 **2021թ.**

Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Դեմեր-1» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Դեմեր» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Արամուս համայնք

Ներածական մաս. Արամուսի բազալտների հանքավայրի <Դեմեր-1>> տեղամասը վարչական առումով գտնվում է Կոտայքի մարզի Արամուս համայնքում, 8 հա մակերեսով տարածքում:

Տեղամասը հողածածկ ու ասֆալտապատ ճանապարհներով կապված է Զովք (3.5 կմ), Ձորաղբյուր (4.5 կմ), Կաթնաղբյուր (3.5 կմ) և Կամարիս (0.34 կմ) գյուղերի, Աբովյան (6.0 կմ), Երևան (13կմ) քաղաքների հետ:

Տեղամասի տարածքը տեղակայված է 1570-1590մ բացարձակ բարձրությունների վրա: Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

400 14' 03" - հյուսիսային լայնության

440 41' 00" - արևելյան երկայնության :

Բացահանքի օտարման մակերեսը կազմում է 3.15հա, արտաքին լցակույտինը՝ 0. 63 հա:

Դեմեր-1 տեղամասի հողի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, վարելահող:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցոության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Արամուսի բազալտների հանքավայրում առաջին հետազոտությունները կատարվել են 1969-1970թթ.-ին՝ ՀԽՍՀ ՄԽ-ին առընթեր Երկրաբանական վարչության կողմից: Հանքավայրի բազալտների հաշվարկված պաշարները ԽՍՀՄ ՊՊՀ-ի կողմից (Արձ. և 6431, առ 29.09.1971թ.) հաստատվել են A+B+C1 կարգերով՝ 1998 հազ.խմ ընդհանուր քանակությամբ, որպես երեսպատման և շինարարական քարի արդյունահանման հումք:

Հանքավայրի շահագործման համար կապիտալ շինություններ չեն կառուցվելու, վարչական գործառույթների, ինչպես նաև անձնակազմի սանիտարա-կենցաղային կարիքների համար նախատեսված են շարժական տնակներ:

Վերջիններս բնութագրվում են ARM WGS-84 համակարգով տրված հետևյալ ծայրակետային կոորդինատներով.

1. X-4455600.9 Y-8472572.2
2. X-4455713.1 Y-8472624.8
3. X-4455804.8 Y-8472671.2
4. X-4455800.0 Y-8472814.0
5. X-4455732.2 Y-8472852.1
6. X-4455640.6 Y-8472724.2

Արամուսի բազալտների հանքավայրի ֆիզիկամեխանիկական հատկություններով ապահովում են «Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий» 9479-2011 ГОСТ-ի և «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-95 ՀՍՏ-ի պահանջները բավարարող բլոկների արդյունահանումը:

Մակաբացման ապարները ներկայացված են 2.5-ից 8.5մ (միջինը 4.37մ) հզորության բազալտների տարաչափ բեկորներ պարունակող դելյուվիալ ավազակավերով և 1.5-ից 3.0մ (միջինը 2.28մ) հողմնահարված բազալտներով, որոնք առանց դժվարության կարող են հեռացվել բուլդոզերով:

Օգտակար հանածոն ներկայացված է 5.0-ից 12.8մ (միջինը 7.01մ) հզորության մերձհորիզոնական տեղադրմամբ բազալտե հաստվածքով, որի մշակումը կարող է իրականացվել հորատասեպային եղանակով:

Տեղամասում հաշվարկված մակաբացման ապարների ծավալը և օգտակար հանածոյի պաշարները համապատասխանաբար կազմում են 172.8հազ.մ^3 և 219.7հազ.մ^3, իսկ մակաբացման միջին գործակիցը՝ 0.81մ^3:

Մակաբացման ապարների ոչ այնքան մեծ հզորությունը կանխորոշում է օբյեկտի շահագործումը բաց եղանակով:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- առավելագույն երկարությունը – 310մ,
- առավելագույն լայնությունը – 175մ,
- ամենամեծ խորությունը - 22մ,
- օտարման տարածքը – 3.15հա,
- բազալտների հաշվեկշռային պաշարների քանակը – 219700մ^3,
- բազալտների արդյունահանվող պաշարների քանակը - 208000մ^3:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ բազալտների զանգվածի, համաձայն տեխնիկական առաջադրանքի, ընդունված է Vտ = 8800մ^3/տարի:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ պիտանի բլոկների կազմում է՝ 1939.7 մ^3, պիտանի բլոկների ելքը բազալտների զանգվածից՝ 0.227, օգտակար հաստաշերտի շահագործական կորուստները՝ 2.9%:

Ընթացիկ մակաբացման գործակիցը հաշվարկային 1-ին տարում կազմում է Kը=0,9մ^3: Հեռացվող մակաբացման ապարների ծավալը հաշվարկային տարում կլինի.

Vմ = 8800 x 0,9 = 7920մ^3:

Բացահանքի ծառայման ժամկետը կկազմի՝ 20 տարի:

Մակաբացման ապարները ДЗ-170 մակնիշի բուլդոզերով մշակվում են ու տեղափոխվում 50-100մ հեռավորության վրա ու կուտակվում: Այնուհետև կուտակված մակաբացման ապարները 0.65խմ շերեփի տարողությամբ, հակառակ բահով սարքավորված ЭО-4321 մակնիշի էքսկավատորով բարձվում են КрАЗ-256Б մակնիշի ավտոինքնաթափի մեջ ու տեղափոխվում բացահանքի հյուսիսային մասում կազմակերպված ժամանակավոր արտաքին լցակույտ:

Ելնելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից հանքաշերտի մշակման ժամանակ ընդունված է ընդլայնական միակողանի, խորացող մշակման համակարգ, մակաբացման ապարների արտաքին լցակույտ տեղափոխմամբ: Ընդունված մշակման համակարգի տարրերը հաշվարկված են համաձայն հանքավայրի շահագործման տեխնոլոգիական սխեմայի, որով նախատեսվում է միաքարի արդյունահանման աշխատանքները կատարել հորատասեպային աշխատանքների եղանակով:

Բլոկների արդյունահանումը բազալտների զանգվածից բաղկացած են հետևյալ գործողություններից.

- միաքարի անջատումը զանգվածից,
- միաքարի հեռացումը (քարշ տալը) հանքախորշից դեպի մշակման վայրը,
- միաքարի մասնատումը բլոկների /մեծաղյուսների/,
- բլոկների կոպտամշակումը,
- շտկամշակված բլոկների բարձումը տրանսպորտային միջոցների մեջ,
- արտադրական թափոնների հեռացումը:

Միաքարի անջատումը զանգվածից նախատեսվում է կատարել հորատասեպային աշխատանքների միջոցով:

Հորատասեպային աշխատանքների կիրառման ժամանակ նախատեսվում է սեպերի տեղադրում սեպանցքերի մեջ և հիդրավլիկ ճնշմամբ առաջացնել զանգվածի ճեղքում: Սեպանցքերը հորատվում են ПП-50В մակնիշի հորատման մուրճերով:

Բլոկների բարձումը սպառողների տրանսպորտային միջոցների՝ КрАЗ-256Б մակնիշի ավտոինքնաթափի թափքի մեջ կատարվում է 12,6տ բեռնաբարձությամբ КС-3577 մակնիշի ավտոկռունկի միջոցով:

Շինարարական խիճը 6802.4մ^3/տարի կամ 45.35մ^3/հերթ ծավալով ДЗ-170,1 բուլդոզերի միջոցով աշխատանքային հորիզոններում տեղափոխվում է 10-15մ հեռավորության վրա և կուտակվում: Այնուհետև ЭО-4321 մակնիշի էքսկավատորով (0.65մ3 շերեփի տարողությամբ) բարձվում է КрАЗ-256Б ավտոինքնաթափի մեջ և տեղափոխվում մինչև 1000մ հեռավորության վրա գտնվող արտադրամաս՝ խճի արտադրության համար օգտագործելու նպատակով:

Շինարարական խճի և մակաբացման ապարների բարձումը КрАЗ-256Б ավտոինքնաթափի մեջ կատարվում է 0.65մ3 շերեփի տարողությամբ ЭО-4321 մակնիշի միաշերեփ էքսկավատորով:

Բացահանքի լցակույտ առաջացնող ապարները 171800մ^3 ընդհանուր ծավալով ներկայացված են մակաբացման ապարներից: Բացահանքի շահագործման ժամանակ մակաբացման ապարները պահեստավորվում են արտաքին լցակույտում, որը հիմնականում ժամանակավոր է և օգտագործվելու է բացահանքի հետագա ռեկուլտիվացիայի համար: Արտաքին լցակույտի մակերեսը կկազմի՝ 0.63 հա: Բացահանքի շահագործումից հետո մակաբացման ապարները տեղափոխվում են մշակված տարածություն, փռվում հատակին և հարթեցվում: Լցակույտառաջացումը կատարվում է բուլդոզերային եղանակով:

,Արդյունահանման աշխատանքների ավարտին, ռեկուլտիվացիոն աշխատանքների շրջանակներում, նախատեսվում է լցակույտային ապարները փռել բացահանքի հատակին՝ 3.15 հա մակերեսով: Ռեկուլտիվացիայի ենթակա տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է

3.15+0.63 = 3.78 հա: Տեխնիկական ռեկուլտիվացումից հետո, կիրականացվի կենսաբանական ռեկուլտիվացում, որի ընթացքում կվերականգնվի կամ կստեղծվի բուսական ծածկ:

Այսպիսով ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ գումարը ըստ նախնական հաշվարկների կկազմի՝ 1մլն. 588 հազ.դրամ:

Հանքարդյունահանման աշխատանքների համար նոր ճանապարհներ չեն կառուցվելու: Օգտագործվելու է գոյություն ունեցող ճանապարհները՝ բարեկարգելով դրանք:

Հանքավայրի շահագործման արդյունքում հաշվարկված տնտեսական վնասը կկազմի՝ 1019202 դրամ, իսկ նախատեսվող մոնիթորինգի ծրագրի գումարը կկազմի՝ 180 հազար դրամ/տարի:

Ֆինանսական աջակցություններ կցուցաբերվեն համայնքում իրականացվելիք ծրագրերին:

Հանքավայրի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել, տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Բացահանքի աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

-փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակին,

- տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահով ձայնախլացուցիչ սարքավորումով՝ աղմուկի մակարդակի նվազեցման նպատակով,

- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկության բացառում ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,

- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա զտիչների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,

- օգտագործված յուղերի ու քսյուղերի հավաքում առանձին տարրաների մեջ,

- հնամաշ մեխանիզմների դետալների ու մասերի կուտակում և հանձնում են, որպես մետաղական ջարդոն,

- կենցաղային կեղտաջրերի հեռացում բիոզուգարանի միջոցով, որը կտեղադրվի արտադրական հրապարակում,

- խախտված տարածքների վերականգնում /ռեկուլտիվացիա/:

Պատճառաբանական մաս. Կոտայքի մարզի Արամուսի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Կոտայքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացմանը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Դեմեր» ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Դեմեր-1» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մեսրոպյան